ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքստուորլդ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
9	Տեքստուորլդ ՍՊԸ	Տեքստուորլդ	Տեքստուորլդ	Կոստյում՝ կիսաբրդյա, ներկայացուցչական (Կոստյում՝ ներկայացուցչական) Կոստյումի լրակազմը կազմված է կիտելից և տաբատից: Կոստյումի արտաքին տեսքը՝ համաձայն ներկայացվող նմուշի: Խմբաքանակից 340 լրակազմի պահանջվող չափսերը՝ 42/2-ից մինչև 66/6 , (նմուշը և ըստ կապույտ ու կանաչ երիզների չափս-հասակային սանդղակները տրամադրվում է Պատասխանատու ստորաբաժանման կողմից), իսկ 10 լրակազմինը ՝ անհատական չափագրումով և կարով (համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացվող անվանական ցանկի): Կիսաբրդյա՝ 34181 արտիկուլի կիսաբրդյա մուգ փիրուզակա¬նա¬չավուն գույնի 333 գրամ 1մ2 մակերեսային խտությամբ, 45% բրդի և 55% պոլիէսթերի բաղադրությամբ գործվածքից (ըստ նմուշի): Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ

				4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Կիտելը միակոճկուն է, բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Կիտելը կարանովի թիկնամասով և փողքերի երկու կողային կտրվածքով, հետծալված օձիքով է, որի եզրերը մշակված են 1.5-1,8մմ հաստությամբ կապույտ կամ կանաչ գույնի 342 գր/մ2 խտությամբ մահուդե եզրագծերով: Օձիքի ներսի հատվածում՝ միացման կարում, մշակված է կախիչ: Երկկարանի թևքերով է, թևքերի վրա՝ ստորին եզրից 10-12սմ վեր, մշակված են ծալքեր (մանժետներ), որոնց վերին եզրերը, նույնպես, մշակված են 1.5-1,8մմ հաստությամբ կապույտ կամ կանաչ գույնի 342 գր/մ2 խտությամբ մահուդե եզրագծերով: Կիտելը կողքերից կտրվածքներով ներկարված է կափույրով ծածկվող գրպաններով: Լանջափեշերը կոճկվում են 4 հատ ՀՀ զինանշանի պատկերով 22մմ տրամագժով ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով (զինանշանը ուղղահայաց): Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով՝ առանց օդային պարկերի, հարթ: Առանձին դետալները /գրպանների կափույրներ, օձիք/, նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով, և վուշ-բրդյա քաթանով: Ձախ կրծքամասից ներքև, գոտկատեղին տեղադրված է ծոցագրպանը, որը կոճկվում է մեկ կոճոկով և օղակով: Կիտելի ձախ թևի

				ուսագլխից 90մմ ներքև կարվում է ասեղնագործված ԱԱԾ խորհրդանիշով թևքանշանը, իսկ աջ թևքի համար նախատեսված զորատեսակի թևքանշանը տրվում է առանձին (թևքանշանները՝ ըստ Պատվիրատույի կողմից ներկայացվող հաստատված նմուշի ձևի և գունավորման): Աստառը՝ մետաքսյա 8-C5-ВШ արտիկուլի կանաչավուն գույնի գործվածքից: Ձախ լանջափեշին ներսամասից մշակվում է կտրվածքով ծոցագրպան, որը կոճկվում է մեկ հատ 15մմ պլաստմասե կոճակով և օղակով: Տաբատը կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով: Աջ հետնամասում կտրված գրպան՝ կափույրով, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին 6 հատ կամրջակներով է, մինչև 50մմ լայնքով գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում հավասարաչափ անցկացվում է 1.8-2մմ լայնությամբ կապույտ կամ կանաչ գույնի 342 գր/մ2 խտությամբ մահուդե երիզներ: Առաջամասում, մինչև ծնկների ստորին հատվածը մշակվում է մետաքսյա 8-C5-ВШ արտիկուլի դեղնականաչավուն գույնի գործվածքից աստառ: Պիտակավորումը: Կիտելի ծոցագրպանի ներսի կողմից և տաբատի ներսից՝ աջ հատվածում, գոտու ներքևից կարվում են պիտակներ, որոնց վրա նշվում է արտադրանքի չափս-հասակը (գրվածքը՝ լավ տեսանելի), պայմանագրի կոդը, արտադրող կազմակերպության անվանումը արտադրման տարեթիվը և խնամքի պիտակը՝

				գլխամասում տեսականու անվանմամբ, լվացքի, քիմմաքրման, արդուկման թույլատրելի չափանիշների գրառմամբ, նաև սիմվոլներով (նվազագույնը 40մմ * 60մմ չափերով, գրվածքը՝ անզեն ընթեռնելի): Կիտելի դիմացի հատվածում՝ վերևից 2-րդ կոճակի վրա պետք է կախված լինի թղթյա պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը (նվազագույնը 40մմ * 60մմ չափերով, գրվածքը՝ անզեն ընթեռնելի): Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ, մինչև 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի և պարկերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Արկղերը՝ փակ, պիտակավորված (նվազագույնը 80մմ * 120մմ չափերով, գրվածքը՝ անզեն ընթեռնելի) , պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
9				